Ռոզա Նեմիշալյան
Երևանի պետական բժշկական համալսարանի դասախոս,
փիլիսոփայական գիտությունների թեկնածու
Էլ.հասցե՝ roza.nemishalyan@gmail.com

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԸ ԿԱՄ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵԱԼԻԶՄ

Կապիտալը վերացական մակաբույծ է, անհագուրդ հրեշ, որը ստեղծում է կամազուրկ էակների: Սակայն կենդանի մարմինը, որը նա դարձնում է մեռած աշխատանք՝ մեր մարմինն է, իսկ ստեղծվող էակները՝ մենք ինքներս:
Մարկ Ֆիշեր

Հոդվածում վերլուծության է ենթարկվում «կապիտալիստական» հասարակարգը, դրա պատմական տարբեր դրսևորումները՝ ուշադրության կենտրոնում ունենալով ժամանակակից տարատեսակը: Կապիտալիզմը, ի սկզբանե լինելով մարդու և հասարակության իրական բնույթն արտահայտող հասարակարգ, իր բոլոր դրսևորումներում ունեցել է հիմնարար մի հատկություն՝ ներթափանցել հասարակության բոլոր ոլորտներ և համապատասխանեցնել դրանք իրեն հատուկ տրամաբանությանը:

Հիմնաբառեր. հասարակարգ, կապիտալիզմ, ժամանակակից հասարակություն, հետարդիականություն, մշակույթ, արվեստ:

Ներածություն

Մարդկությունը բոլոր ժամանակներում փորձեր է կատարել կառուցելու առավել արդյունավետ գործառող հասարակարգեր, մարդու փոխազդեցություններն աշխարհի, իր նմանների հետ կարգավորել առավել քաղաքակիրթ սկզբունքներով և ձևավորել սոցիալական իրականություն, ուր

մարդը կլինի պաշտպանված և կկարողանա դրսևորել իր էութենական բնույթի ողջ բովանդակությունը: XXI դարում մարդկությանը հաջողվել է հասարակական բոլոր ոլորտներում առաջընթաց գրանցել, հաղթահարել բազմաթիվ արատավոր երևույթներ, որոնք տանջել են մարդուն պատմության ողջ ընթացքում: Օրինակ՝ բացահայտվել են տարբեր խտրականությունները և գրեթե հաղթահարվել են դրանք, զարգացվել է գիտությունը և տեխնիկան այնքան, որ ամբողջությամբ վերափոխել և հարմարացրել ենք աշխարհը: Կարողանում ենք խուսափել համաշխարհային պատերազմներից ու համաճարակներից: Սակայն մարդը դեռևս մնում է օտարված, լքված, ոչ լիարժեք: Ճգնաժամերը, հոգեկան խանգարումներն էլ ավելի են շատացել բարեկեցիկ հասարակություններում: Պատճառը, ըստ համընդհանուր տեսակետի՝ կապիտալիստական իրականությունն է, որը, իհարկե ևս կարիք ունի խոր վերլուծության: Մի կողմից մասնավոր սեփականությունը, մրցակցությունը, փոխանակումը դիտարկվում են որպես մարդու էությանը բնորոշ հատկանիշներ, մյուս կողմից դրանք մարդուն դարձնում են ապրանք, արժեզրկում են այն ամենը, ինչը փոխարժեք չունի, զրկում են բովանդակությունից ոչ միայն մարդու հարաբերություններն աշխարհի հետ, այլ նաև նրա կյանքի իմաստը վերածում են թվային և ապրանքային փոփոխականների: Ժամանակակից աշխարհն ապրում է «ուշ» կապիտալիզմի դարաշրջանում, որը շարունակում է ձևավորել պետական սոցիալական կառույցը և ստեղծել իրեն հատուկ մշակութային տրամաբանություն՝ հետարդիականություն: Ավելին, մշակութային տրամաբանության միջոցով գոյատևելը և ամրապնդվելը կապիտալիզմի ավանդական «սովորույթն» է: Առաջին հայացքից մշակույթը կարող էր որոշակի փոփոխությունների ենթարկվել, մարդը և իր հոգևոր աշխարհը բավականին առաջընթաց ապրեցին XX դարում, որի 60–70-ականները ընդհանրապես համարվում են բարեկեցության տարիներ, սակայն հասարակության տնտեսական հիմքը համապատասխանեցնում է մշակույթն իրեն «ձեռնտու» տրամաբանությանը: Մշակույթն իր ազդեցությունն է տարածում հասարակության բոլոր ոլորտների վրա: Կարելի է ասել, որ հասարակական ոլորտները դառնում են մշակութային գործնականում՝ չիմաստավորելով այդ ամենը տեսական մակարդակի վրա:

Մեթոդը և տեսական հիմքը

Ժամանակակից կապիտալիստական ռեալիզմը վերլուծելու համար օգտագործվել է համակարգային մեթոդը: Հասարակությունը դիտակվել է որպես ամբողջական համակարգ՝ իր բոլոր ոլորտների փոխազդեցությամբ: Իրականացվել է մասնագիտական գրականության մեջ առկա տեսությունների համադրական և համեմատական վերլուծություն: Աշխատանքի տեսական հիմքն են կազմել ժամանակակից հետազոտողների՝ Ֆրեդերիկ Ջեյմսոնի, Մարկ Ֆիշերի, Ալան Բոդյուի, Հանս Ֆրեհնաչտի աշխատությունները: Վերջինս ոչ թե դասական իմաստով փիլիսոփա է, այլ հավաքական հեղինակ, որը համացանցային տիրույթում վարում է ազդեցիկ գիտական մի բլոգ:

Ժամանակակից հասարակության բնորոշիչները

Ֆրեդերիկ Ջեյմսոնը նկարագրում է հետարդիական հասարակությունը՝ առանձնացնելով չորս հիմնական բաղադրիչներ: Առաջինը հետարդիականության հիմնական հատկանիշներն են՝ մակերեսայնությունը և խորության բացակայությունը: Հետարդիականության արվեստի գործերը բավարարվում են կերպարների արտաքին նկարագրությամբ՝ չփորձելով նույնիսկ բացահայտել դրանց ներքին բովանդակությունը, հիմքում գտնվող երևույթները: Ակնառու օրինակ է ժամանակակից փոփ արվեստի հայտնի ներկայացուցիչ Էնդի Ուորհոլի «Կեմպբել ապուրի տարաներ» ստեղծագործությունը: Այն պատկերում է ընդամենը տարաներ, Բոդրիյարի եզրույթով «սիմուլյակրներ»՝ կեղծ նմանակներ: Հասարակական կառույցը բաղկացած է նշանային համակարգից, որի միավորը սիմուլյակրն է: Բոդրիյարը սիմուլյակրը մի կողմից սահմանում է որպես կեղծ նմանակ, որը քողարկում է բնօրինակի բացակայությունը և դրանով իսկ չարիքի աղբյուր դառնում, մյուս կողմից՝ գիտակցության գաղափարականացման կերպար, երևակայություն, ցնորք: Հասարակության պատմությունն, ըստ Բոդրիյարի սոցիալական իրականության ներկառուցումն է կեղծ օբյեկտներով (սիմուլյակրներով): Ուորհոլի նկարն ինքնատիպ սիմուլյակր է և միաժամանակ հնարավոր չէ տարբերել բնօրինակը կեղծ նմանակից: Ջեյմսոնը բնորոշում է սիմուլյակրը որպես «նույնատիպ պատճեն, որը երբեք էլ չի ունեցել բնօրինակ» (Бодрийяр, 2001, էջ 6) :

Երկրորդ՝ հետարդիականության հիմնական բնորոշիչներից են աֆֆեկտը և հույզերի թուլացումը: Որպես օրինակ Ջեյսոնը հակադրում է Ուորհոլի ևս մեկ ստեղծագործություն՝ Մերլին Մոնրոյի ֆոտոպատկերը Էդվարդ Մունկի «Ճիչ»-ը դասական արդիականության ստեղծագործությանը: «Ճիչ»-ը Ջեյմսոնը բնորոշում է որպես իրականությունից անդին գտնվող մարդու, որն արտահայտում է խորը հուսահատություն, օտարվածություն և լքվածություն: Ուորհոլի Մոնրոյի ֆոտոպատկերը մակերեսային է, զուրկ իրական հուզականությունից: Դա է հետարդիականության ոճը, դիրքորոշումը՝ Մունկի «ճիչը» լքվածության ու օտարվածության մասին այլևս մնացել են անցյալում: Օտարվածությունը հետարդիականությունը փոխարինում է մասնատվածությամբ: Աշխարհը և մարդը տրոհվել են մասերի, մնացել է միայն «անիմաստ, առանց պատճառի» աֆֆեկտը: Հետարդիականության ընկալումներից է նաև, ըստ Ջեյմսի, յուրահատուկ էյֆորիայի զգացումը, որը նա անվանում է «շիկացում»: Այդպիսի «շիկացման» օրինակ են հույզերը որոնք «մարդը ունենում է նոր էլեկտրոնային միջոցներով տարվելիս» (Jameson, 1991, էջ 85) :

Երրորդը պատմականության կորուստն է: Մենք չենք կարողանում ճանաչել անցյալը, մեզ հասու են միայն անցյալի մասին տեքստերը, որոնք ավելացվում են նոր նմանատիպ տեքստերով: Պատմականության կորուստը բերել է «անցյալի բոլոր ոճերի կլանմանը», ինչի հետևանքն է պոպուրին՝ հետարդիական մտածողության ևս մի կարևոր հատկանիշ: Քանի որ մենք չենք կարող անցյալի մասին ամբողջական ճշմարիտ պատկեր ունե-

նալ, ապա բավարարվում ենք միայն պոպուրի ձևավորելով, որն իրենից ներկայացնում է մեծ մասամբ հակասական, միմյանց հետ կապ չունեցող գաղափարների ամբողջություն: Բացի այդ, բացակայում է նաև պատմական զարգացման հստակությունը, դրա գիտակցումը: Անցյալը և ներկան անխզելիորեն փոխկապված են, մենք միայն արտահայտում ենք մեր նույնանման պատկերացումները անցյալի վերաբերյալ:

«Կապիտալիստական ռեալիզմ» հասկացությունը

«Կապիտալիստական ռեալիզմ» հասկացությունը 1960 թվականին օգտագործել են մի խումբ փոփ արտիստներ և 1984 թվականին Մայքլ Շադսոնը իր «Գովազդ: Համոզելու դժվարությունները» գրքում, որտեղ այն օգտագործվեց հեգնանքով՝ ակնարկելով սոցիալիստական ռեալիզմը: Մարկ Ֆիշերն այս հասկացությունն օգտագործում է ավելի լայն իմաստով՝ չսահմանափակվելով գովազդի և մշակույթի ասպարեզներով: Ֆիշերը բնորոշում է կապիտալիստական ռեալիզմը որպես ներթափանցող մթնոլորտ, որն ազդում է ոչ միայն մշակութային արտադրության, այլ նաև աշխատանքի և կրթության վրա, որպես անտեսանելի մի խոչընդոտ կառուցարկում է մարդկանց մտքերը և վարքը (Fisher, 2015, էջ 16):

Ֆրեդերիկ Ջեյմսոնը կապիտալիզմի զարգացման պատմությունը բաժանում է երեք փուլի: Առաջինը՝ Մարքսի նշած շուկայական կապիտալիզմը, երբ ձևավորվեց միասնական ազգային շուկան: Երկրորդը՝ Լենինի նշած կայսերական կապիտալիզմը, որը ձևավորեց համաշխարհային կապիտալիստական համակարգը: Երրորդը՝ Մենդելի և Ջեյմսոնի նշած «ուշ կապիտալիզմը» , որը ներառում է կապիտալի ծավալուն ներխուժում բոլոր ոլորտներ: Այդ ներխուժումը բոլորովին չի հակասում XIX դարում Մարքսի կատարած վերլուծությանը, հակառակը, երբևէ գոյություն ունեցող կապիտալի «ամենամաքուր» տեսակն է ձևավորում: Ժամանակակից կապիտալիզմի առանձնահատկությունը, ըստ Ջեյմսի, նրա բազմազգ լինելն է, ինչպես նաև այն փաստը, որ ամեն ինչ ենթարկվել է շուկայի օրենքներին և վերածվել ապրանքի: Այսպիսով՝ Ջեյմսոնը ռեալիստական մշակույթը բխեցնում է շուկայական կապիտալիզմից, արդիականության մշակույթը՝ մոնոպոլիական կապիտալիզմից, իսկ հետարդիականության մշակույթը՝ բազմազգ կապիտալիզմից: Ժամանակակից ֆրանսիացի փիլիսոփա Ալան Բադյուն գրում է. «Կապիտալիստական ռեալիզմի պայմաններում պահպանվում է անհավասարությունը, ցանկացած իրողություն ֆինանսական չափում է ստանում, և այդ ամենը ներկայացվում է որպես կատարելություն: Ստեղծված կարգի կողմնակիցները, որպես արդարացում իրենց պահպանողականությանը, չեն կարող այն համարել կատարյալ: Դրա փոխարեն նրանք նշում են, որ մնացած ամեն ինչ սարսափելի է. միգուցե մենք չենք ապրում կատարյալ Բարիքի պայմաններում, սակայն լավ է գոնե Չարիքի պայմաններում չենք ապրում: Մեր ժողովրդավարությունն անթերի չէ, բայց այն ավելի լավն է, քան արյունոտ բռնապետությունը: Կապիտալիզմն անարդար է, բայց բռնապետություն չէ» :

Փիլիսոփա, պատմաբան և սոցիոլոգ Հանս Ֆրեինաչտը 2017 թվականին հրատարակեց «Լսող հասարակություն» գիրքը, որտեղ ներկայացնում է այն իրողությունը, որ XX դարի մեծ մասը բնութագրվում է որպես արդիականության ժամանակաշրջան: Արդիականությունն այստեղ ընդհանրական հասկացություն է, որն ընդգրկում է քաղաքակրթության զարգացման գագաթնակետ համարվող համընդհանուր պրագմատիզմն ու ռացիոնալությունը: Մարդկությունն արդյունաբերական դարաշրջանից և ազգային պետություններից անցավ տեղեկատվական դարաշրջան՝ համաշխարհային հետարդյունաբերական շուկայով, և հարց առաջացավ, թե ապագայում ինչպիսի՞ հասարակություն է ձևավորվելու և փոխարինելու ազատական ժողովրդավարությունը, որը հավասարակշռում է կապիտալիզմը և բարեկեցիկ պետությունը: Հանսը գտնում է, որ քաղաքակրթությունը հասել է արդիականության սահմաններին և այժմ անցում է կատարում մետաարդիականության: Վերջին տասնամյակների ընթացքում կապիտալիստական ռեալիզմը, օրինակ ձևավորել է «բիզնես օնտոլոգիա», որն ակնառու ցույց է տալիս, որ հասարակական բոլոր ոլորտները, նաև՝ առողջապահությունը և կրթությունը, ենթարկվում են բիզնեսի օրենքներին: Այս ամենի հետևանքներից է, օրինակ, որ ուսուցիչներն այսօր ստիպված են համադրել ուշ կապիտալիզմի սպառողի հետկրթական սուբյեկտիվությունը և դիսցիպլինար կարգապահության (օրինակ քննությունների) հետ: Կրթությունը վերածվել է հասարակական իրականության վերարտադրության մեքենյական մի բաժնի, որն անմիջականորեն կապի մեջ է կապիտալիստական հասարակական դաշտի անհամաձայնությունների հետ: Դասավանդողները ստիպված են միաժամանակ կատարել և՛ դիսցիպլինար հեղինակության, և՛ խմբային զվարճացնողի գործառույթներ: Պետք է օգնեն ուսանողներին հանձնել քննությունները՝ հստակ հրահանգներով ուղղորդելով նրանց, միաժամանակ այնպես այդ ամենը կազմակերպեն, որ սովորողները «չձանձրանան», պետք է կարողանան հետաքրքրություն առաջացնել:

Շատ վերլուծաբաններ և փիլիսոփաներ (Բրեխտ, Ֆուկո, Բադյու) նշում են, որ ազատագրական շարժումները պետք է վերացնեն «բնական կարգը», պետք է ցույց տան, որ այն, ինչ համարվում է անհրաժեշտ ու անխուսափելի, իրականում պատահական է: Ջեյմսոնը «Հետարդիականություն և սպառողական հասարակություն» աշխատության մեջ նկատում է, որ Լականի շիզոֆրենիայի տեսությունը մեզ տալիս է սուբյեկտիվության հատվածականացման «հզոր գեղագիտական նմուշօրինակ (մոդել)», որը բախվում է զարգացող ժամանցի արտադրության հետ: Ջեյմսոնը գալիս է այն եզրակացության, որ երբ «վերացվում է նշանակողների շղթան, շիզոֆրենիկը հանգում է պարզ նյութական նշանակողների փորձի, կամ այլ կերպ ասած՝ ներկայի մաքուր ու միմյանց հետ կապ չունեցող պահերի հաջորդականության»: Այս դեպքում, եթե ուշադրության պակասը և հիպերակտիվությունն ախտաբանություն է, ապա այն ուշ կապիտալիզմի ախտաբանությունն է, այսինքն՝ սպառողական մշակույթի զբաղեցնող-վերահսկող կառույցին միանալու հետևանքն է: Այսպիսով՝ այն, ինչ անվանում ենք

դիսլեքսիա, շատ դեպքերում հետ լեքսիան է: Դեռահասները հաջողությամբ կարողանում են ընկալել և կիրառել կապիտալի տեսողական կերպարները՝ ընթերցանության կարիքը բոլորովին չունենալով, ցանցային –տեղեկատվական տարածքում կողմնորոշվելու համար ընկալելով միայն ազդակները: Դելյոզը և Գվատարին «Հակա-Էդիպ» աշխատության մեջ նշում են. «գիրը երբեք կապիտալիզմի սեփականությունը չի եղել», «էլէկտրոնային լեզուն չի միջնորդավորվում ձայնով կամ գրավոր լեզվով, այն դրանց կարիքը չունի տվյալները մշակելու համար»(Делез, Гваттари, 2009, էջ 65) :

Եզրակացություն

Կապիտալիզմի էթիկական քննադատությունից բխում է, որ տառապանքին տանող ուղիները ավելի են հզորացնում կապիտալիստական ռեալիզմը: Աղքատությունը, ֆեմինիզմը, պատերազմները կարող են գոյություն ունենալ որպես իրականության անխուսափելի բաղկացուցիչներ և որևէ հույս ունենալ, որ հնարավոր է դրանցից ազատվել, ընդամենը միամիտ ուտոպիա է: Կապիտաալիստական ռեալիզմը կարող է հարվածի տակ հայտնվել, եթե միայն բացահայտվի դրա հակասականությունը և անկարողությունը, եթե ցույց տվի կապիտալիստական «կասկածելի» ռեալիզմի ոչինչ լինելը: Այն, ինչ համարվում է ռեալիստական, այն, ինչ իրական է սոցիալական իրականության մեջ, որոշվում է մի շարք քաղաքական սահմանումներով: Գաղափարական դիրքորոշումը չի կարող արդյունավետ լինել, եթե համապատասխանեցված չէ իրական գործընթացներին, բայց այն չի կարող համապատասխանել քանի դեռ ընկալվում է որպես արժեք, ոչ թե որպես փաստ: Հետևաբար ժամանակակից նեոլիբերալիստական հասարակությունները կարողացել են վերացնել հենց արժեքի կատեգորիան էթիկական իմաստով:

Այսպիսով, բոլոր ժամանակների մարդկության ամենաարատավոր հասարակական կարգը՝ կապիտալիզմն ամրապնդել է իր դիրքերը, ավելին, այն հաստատել է իր լեգիտիմությունը վերածվելով ռեալիստական կարգի: Դրանից ազատվելու համար պատմության ընթացքում փորձեր են արվել անցնելու «սոցիալիստական իրականությանը», ինչը ևս չհաջողվեց: Ժամանակակից աշխարհում այդպիսի փորձերը շարունակվում են, օրինակ Սկանդինավյան երկրներում, ուր կապիտալիզմը պետության վերահսկողության և աստիճանական փոփոխությունների միջոցով անցնում է սոցիալիզմի: Սակայն այդ փոփոխությունները պետք է լինեն ոչ միայն տնտեսական և օրենսդրական, այլև առաջին հերթին՝ արժեքային և աշխարհայացքային:

Օգտագործված գրականության ցանկ

Бодрийяр, Ж. (2001).*Система вещей.* М., Рудомино.

Делез Ж., Гваттари Ф. (2009). *Что такое философия?* Академический проект.

Бадью, Ален Этика. *Очерк о сознании Зла.* http://rumagic.com/ru_zar/sci_philosophy/badyu/0/j3.html (մուտք՝ 28.06.2019)

Jameson, Frederic (1991). *Postmodernism or, the cultural logic of late Capitalism.* Duke University Press Durham, USA.

Fisher, Mark (2009) *Capitalist realism.Is there no alternative?* John Hunt Publishing, Winchester, Washington.

References

Bodriyyar, Zh. *Sistema veshchey* [The system of things.]. M., Rudomino, 2001.(In Rus.)

Delez Zh., Gvattari F., *Chto takoe filosofiya?* [What is philosophy?] Akademicheskiy proekt, 2009 g.

Bad'yu, Alen *Etika. Ocherk o soznanii Zla* [Ethics. Essay on the consciousness of Evil]. http://rumagic.com/ru_zar/sci_philosophy/badyu/0/j3.html (accessed՝ 28.06.2019). (In Rus.)

Jameson, Frederic (1991). *Postmodernism or, the cultural logic of late Capitalism.* Duke University Press Durham, USA. (In Eng.)

Fisher, Mark (2009) *Capitalist realism.Is there no alternative?* John Hunt Publishing, Winchester, Washington. (In Eng.)

Роза Немишалян

Лектор Ереванского государственного медицинского университета,
кандидат философских наук
Эл.адрес: roza.nemishalyan@gmail.com

СОВРЕМЕННЫЙ КАПИТАЛИЗМ ИЛИ КАПИТАЛИСТИЧИСКИЙ РЕАЛИЗМ

В статье анализируется современный политический строй. Человечество прошло несколько этапов капитализма, мы живем в эпоху капиталистического реализма, который также называют поздним капитализмом. Современный всепоглощающий строй проникает во все сферы человеческого бытия, он формирует вездесущую атмосферу, превращая все и вся в продукт обмена. Культура, человеческие отношения, ценности подчиняются логике капитализма, ведь она же реалистична, она адекватна человеческой сути, и потому непреодолима.

Ключевые слова: общественный строй, капитализм, современное общество, постмодерн, культура, искусство.

Roza Nemishalyan
Lecturer at Yerevan State Medical University after Mkhitar Heratsi,
Ph.D. in Philosophy
Email: roza.nemishalyan@gmail.com

MODERN CAPITALISM OR CAPITALISTIC REALISM

The article analyzes the modern political system. Humanity has gone through several stages of capitalism; we live in the era of capitalistic realism, which is also called late capitalism. The modern all-consuming system penetrates into all spheres of human existence; it forms an omnipresent atmosphere, turning everything and everybody into product of exchange. Culture, human relations, values obey the logic of capitalism as it is already realistic, adequate to the human essence, and therefore irresistible.

Key Words: capitalism, modern society, postmodern, culture, art.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել 2020թ. ապրիլի 10-ին:
Հոդվածը հանձնվել է գրախոսման 2020թ. ապրիլի 15-ին:
Հոդվածն ընդունվել է տպագրության 2020թ. հուլիսի 8-ին: